

ԶԳՍՅՆՈՒԹԵԻՆ

Գարունին պէս որ մեղմիւ կը յաջորդէ ձմեռուան
Կը սողոսկի ինէ ներս շող մը յուշէդ գողունի
Ու կը բռնեմ զայն հեշիւ, կըծիկ մ'ամբողջ փակելու.
Չմեռը ցուրտ սրտութեանս կը փոխուի հեշ գարունի....:

×

Կ'զգամ կազդոյր ու բերկրանք, երբ արեւին պէս գարնան
Կը փաթթուի էութեանս կեանքի պատառն այդ անցեալ
Ու կ'ողորդէ հեշանով զոր, անծպիտ այս ներկան
Կ'ըլլայ խայտանք ու քրքիռ ու խենթ պատրանք ծովացեալ....:

×

Տղու մը պէս որ կ'ուզէ դաշտանկար մը ամբողջ
Պարագրկել լոկ աչով, ճանելու զայն միշտ իր հետ,
Ես կը գրկեմ միամիտ, փողքը տեսիլքն այս բողբոջ
Պահ մը արբեիտ գարնայնի միջոցին մէջ լուսաւէտ:

×

Սաւազին պէս ծովափի, արգ կը հոսի մասներէս
Ոսկեփոշին օրերու, մայրամուտին նման պերճ
Գիտեմ կ'անցնի պատկերն այս բոլոր պատրանքներուն պէս
Ու կը մնայ լոկ մրուր, ցուրտն ու քախիծը կեղերջ....:

×

Համարաւոր ձմեռն մէջ, մոռցուած օր գարունի....:

ԶԱՒԷՆ Վ. Զ.



4728

169-58

